

կըտուի թէ մօտերո իւր ընտանեօր
բոլորովին պիտի մեկնի քաղաքէս, ու
բաժնեաւ արգէն իւր յաջորդը եկած է:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ի

Գ. Ս. ԻԱՊԱՅՆԱՆԷ:

ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԹՏԷ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՅ

Կը վաճառուի յերուսաղէմ՝ և ՚ի
Պօլիս ՚ի Փոխանորդարան:

Գին 7 շահեկան:

Սոյն հրատարակութեան վերայ փոք-
րիկ ծանօթութի մի տարու համար ար-
ժան կը համարիմք դասագրքին հետեւ
եւալ ԱԶԳԸ հրատարակել:

“Ներքոյ Համառօտ Աշխարհագր-
ութիւնը պատրաստեցինք նորավար-
ժից համար ուղեցոյց ունենալով մեզ
բոլոր քաղաքական նոր փոփոխմանց և
աշխարհագրական նորագոյն գիտելեաց
ի վերջին ժամանակս հրատարակուած
Գաղղեարէն ընտիր դատագրքերն:

Դասաւորութեան մասին պատշաճ
գատեցինք ընդհանրապէս նոր ընդու-
նուած եղանակին հետեւիլ, նախ Բը-
նական մասն գնելով, ապա Քաղաքա-
կանն և ՚ի վերջոյ Ուսումնականն:

Սոյն դասաւորութեան գլխաւոր
օգուտն այն է, որ երկրագնախ բնա-
կան նկարագիրը աշխարհագրական
ուսման սէր և հետաքրքրութիւն կը
զարթուցանէ նորավարժից մէջ. զխա-
ւոր լերանց շղթայից ու զղութիւնը ա-

ւելի զուարճութիւն կը տայ, քան Քա-
ղաքական մասն ուղեւթեանց և քա-
ղաքաց ցամաք անուններն. մարդկային
ցեղի ոյլ և ոյլ բաժանմանց, նոցա
քաղաքակրթութեան աստիճանին եւ
աշխատութեանց ուսումն աւելի զը-
ւարձելի է. վերջապէս երկրագնախ
այլ և ոյլ մասանց սրտաբերութեան
եւ զանազան կենդանեաց համառօտ
նկարագիրն աւելի մանկական հասա-
կին յարմար է: Բայց յատախ, նկատե-
լով որ շատ անգամ ցամաք անուա-
նացուցութիւնը տաղախութիւն կը
պատճառէ ուսանողներուն և եռանդը
կը մարէ, շատ համառօտ անցանք Քա-
ղաքական մասն ժիպն գլխաւոր քա-
ղաքներն գնելով, աշխարհներն կամ
տէրութիւններն եւս բնական բաժան-
մանց, կամ առաջնաց համեմատ դա-
սաւորեցինք գիրքսրոնելի առնելու
համար: Ուսումնական մասին մէջ ևս
նախընթաց երկու մասանց համառօ-
տութիւնը պահպանեցինք: Իսկ ամե-
նէն վերջոյ աւելցուցինք Հայաստանի
աշխարհագրութիւնը, զոր մեր մա-
նուկներն աւելի ընդարձակօրէն ուսա-
նիլ պարտաւոր են ՚ի կանուխ ժամա-
նակաց և կատարելապէս տեղեկանալ
իրենց հայրենեաց:

Բաւ համարելով սոյն փոքրիկ ծա-
նօթութիւնը դասագրքին վերայ, կը
յուշեցուց, որ Ս. Աթուոյս Տ. Ժո-
ղովց կողմէն Ուսումնական Խորհրդոյ
քննութեան յանձնուելով հաւանու-
թիւն գտած է սպագրութեան, ո-
րով կը յուսամք թէ՛ նոյն հաւանու-
թիւնն պիտի գտնէ աղգային վարժա-
րանաց մէջ իւր կիրառութեամբն, որ
մեր աշխատանոց միակ և ամենէն մեծ
վարձն կը համարիմք:

Տես երես 136 գրէն կարգադրու է գրիկն. Ժո-
ճան. կարգադրու է ժամանակի: